ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

-- նոյեմբերի 2021 թվականի N----Ն
ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 18-Ի N468Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածները՝ Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը **որոշում է.**

1. Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2019 թվականի դեկտեմբերի 18-ի «Սպառողների էներգատեղակայանքներով էլեկտրական էներգիան ենթասպառողների կամ բաշխողի այլ ցանցերի սնման համար փոխանցելու կարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի 2004 թվականի ապրիլի 14-ի N41Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N468Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի՝

   1) 15.1 կետի N1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ N1
(առանց ավելացված արժեքի հարկի)

N	Մեծությունը	Վճարի չափը
1.	a_1	8 636 դրամ/ամիս
2.	a_2	468 դրամ/ամիս
3.	a_3	0,867 դրամ/կՎտժ
4.	a_4	1,553 դրամ/կՎտժ
5.	a_5	1,745 դրամ/կՎտժ
6.	a_6	0,836 դրամ/կՎտժ
7.	a_7	1,484 դրամ/կՎտժ

».

   2) 16-րդ կետի N1 աղյուսակը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Աղյուսակ N1 դրամ/ամիս
(առանց ավելացված արժեքի հարկի)

N	Սպառողի սպառման համակարգի լարումը	Սպառողի ենթակայանի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը	Սպառողի էլեկտրահաղորդման գծերի շահագործման փոխհատուցվող ծախսերի սահմանային մեծությունը
1.	6 (10) կՎ	97 157	17 993
2.	35 կՎ	388 628	30 587
3.	110 կՎ	777 257	32 385

»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2022 թվականի հունվարի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ՝ Գ. ԲԱՂՐԱՄՅԱՆ

ք. Երևան
-- նոյեմբերի 2021 թ.